եմ, ըստ ընդունակութեան իւրեանց, բաց ի ծաղկագրաց և ի պատկերաց և ի կարմիր ներկով գլխագրաց և կամ ի խորագրաց, զի ես ոչ գիտեմ զփորագրութիւնս ծաղկագրաց և պատկերաց, և զխառնուածս կարմիր ներկին։ Բայց զգրեանս այլոց աղդաց փորագրելոյ կամ ուսուցանելոյ չունիմ ինչ պարտականութիւն։ Բայց թէ ինքեանք խնդրեսցեն և ես եթէ կարող լինիցիմ աստուծով փորագրութեան, զայնս ևս ի լոյս ածելոյ ջան դնելոց եմ, եթէ ժամանակն ներեսցէ, զի այս գործ երկար ժամանակի կարոտանայ լրութեան։ Եւ ահա այս է եղանակ դաշնագրութեան մերոյ, որ ընդ Մահտեսի Մելիտոնին մէկ տարին երեք հազար հինգ հարիւր զուռուշ վարձ հատեալ ձեռագիր առի ի նմանէ, որ քանի տարի և քանի ամիս ծնայցեմ անդ ի գործ իւրեանց՝ մէկ տարին երեք հազար հինգ հարիւր զուռուշի հիսապով առանց այլ և այլ ասութեան՝ ինչ ժամանակ որ ինձ գրամ պիտոյանայցէ, առնելոց եմ։ Իսկ և ի ճանապարհին եղեալ մասրաֆն, թէ այժմ երթալոյս և թէ գկնի աւարտման գործոյն յետ դառնալոյս, և կամ անդ քանի տարի որ ծնայցեմ ի գործ իւրեանց, իմ և ընդ իմ եղեալ սպասաւորիս բոլոր մասրաֆն ինքեանք տալոց են, իմ քսակէս մէկ դրամ մասրաֆ կամ այլ ինչ ելանելոց չէ։ Իսկ և սպասաւորին իմոյ տարին հարիւր յիսունական զուռուշ վարձ ինքեանք տալոց են։ Եւ ահա զայս պայման արարաք ի վերոյ թուոյն (որ է հազար յօթն հարիւր ութսուն և մէկ մայիսի քսան երեքին) և ի նոյն աւուր, իբր սկսելոյ հիսապով զավլ արարաք, որովհետև յայնմ աւուր ի ճանապարհ ելաք և վարձկանութեան իմոյ թարեխն ի նոյնոյ աւուր սկսաւ։ ուստի և երեք հազար հինգ հարիւր զուռուշ փէշին մէկ տարի չէքս առի աստ ի Մահտեսի Մելիտոնէն, որ մինչև ցհետևեալ տարւոյ մայիսի 23 օրն լմանցի վարձս առի, և հետևարար ամէն տարի երեք հազար հինգ հարիւրական զուռուշ առնելոց եմ, եթէ տէր հասուսցէ։ Ուստի Մահտեսի Մելիտոնն, վէքիլ և փոխանորդ գոլով վերոյգրեալ Արքային Հերակլայ, յայս միտ ձեռագիր իմն գրեալ ի հաստատութիւն բանից իւրոց՝ ետ ինձ. և ես զսոյն գիր ի հաստատութիւն բանից իմոց գրեալ՝ ետու նմա, որ ինձ ընդունելի է։

Ի փառս Յիսուսի Քրիստոսի աստուծոյ մերոյ՝ Քրիստոսի ծառայ Պօղոս դպիր Յոհաննիսեան։

Հայկական ՍՍՌ Պետ. Մատենադարան, Արխիվային բաժին, Անհատական արխիվների ֆոնդ (Կյուրեղ Սրապյանի արխիվ), թղթ. № 81ա, վավ. № 6։

Վկայ բանիս աստուած Կնիք
Γεώργιος Ζαφθρῆς μάρτυς
Ἠσαΐας Κηρλῆ παπᾶς μάρτυς[1]
Ես Դիմիրգիս վկայ

[1] Հունարեն լեզվով գրված է Գեորգիոս Զավթրիս վկա, և Իսաիաս Քիրլի քահանա վկա։